Հաշիվ ապրանքագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ		
12	Սեպտեմբեր	2019 թ.
[4] Մատուցման ամսաթիվը		
29	Օգոստոս	2019 թ.

[2] Սերիա	[3] Համար
Բ	5777681619
Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	4	4	2	5	0	0	4

[9] Անվանումը	«ԳԵՌ-ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[10] Բանկային տվյալները	"Բիբլոս Բանկ Արմենիա" ՓԲԸ, Կենտրոնական գրասենյակ	N 2140005610810100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԱՐՄԱՎԻՐ ՓԱՐԱՔԱՐ ՓԱՐԱՔԱՐ ՆԱԻՐԻ Փ. 50	
[12] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3

[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[15] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[17] Լրացուցիչ տվյալներ		

[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

NN Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծառայության քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Թիվ 28102817քր. գործով չափագրման և իրադրության հանույթի փորձաքննություն	կոմպլեկտ	1	100000	100000
Ընդամենը					100000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ TADEVOSYAN GAYANE 7014900072

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

12/09/2019 11:06:15

28102817 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ու Թ Յ Ու Ն

« 29 » մարտի 2019 թ. քաղ. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ռ.Գ.Մխիթարյանս, քննարկելով վարույթիս թիվ 28102817 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի ապրիլի 25-ին Շիրակի մարզի դատախազությունից թիվ 64/128դ-17 ուղեկցական գրությամբ Արթիկի և Անիի քննչական բաժին է ստացվել Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի բնակիչ Համլետ Հովհաննիսյանի դիմումն այն մասին, որ իր համագյուղացի Պարգև Ակուլյանն իրեն է ներկայացրել հողատարածքի սեփականաշնորհման վկայական, որը չի համապատասխանում համայնքի գլխավոր հատակագծին և նշված փաստաթղթում առկա տվյալները կեղծված են:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնում նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ տարածքային ստորաբաժանումից պահանջվել և ստացվել է 08-107-0033-0013 ծածկագրերով հողատարածքի կադաստրային գործի պատճենը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հիշյալ ստորաբաժանման Արթիկի բաժնի աշխատակից Մարտին Քիթոյանի կողմից կատարված չափագրման արդյունքների հիման վրա Համլետ Հովհաննիսյանի անվամբ համատեղ սեփականության իրավունքով Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում պետականորեն գրանցված է 290 քառակուսի մետր հողատարածք: 2017 թվականի ապրիլի 25-ին Շիրակի մարզի դատախազությունից թիվ 64/128դ-17 ուղեկցական գրությամբ Արթիկի և Անիի քննչական բաժին է ստացվել Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի բնակիչ Համլետ Հովհաննիսյանի դիմումն այն մասին, որ իր համագյուղացի Պարգև Ակուլյանն իրեն է ներկայացրել հողատարածքի սեփականաշնորհման վկայական, որը չի համապատասխանում համայնքի գլխավոր հատակագծին և նշված փաստաթղթում առկա տվյալները կեղծված են:

Համլետ Հովհաննիսյանը բացատրությամբ հայտնել է, որ 1998 թվականին Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում՝ Գեղանիստ և Արևշատ գյուղեր տանող ավտոճանապարհների խաչմերուկում ձեռք է բերել 290 քառակուսի մետր տարածքով հողամաս, որի վերաբերյալ 2004 թվականի մայիսի 31-ին կադաստրի կողմից հատկացվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական: Համապատասխան փաստաթղթերի ձևակերպումից և շինթույլտվություն ունենալուց հետո, նշված հողամասի վրա կառուցել է ավտոտնակ, որը դեռևս անավարտ է, այսինքն բացակայում են պատուհանները և դարպասը: Իր հողատարածքի հարևանությամբ հողատարածք ունի նաև համագյուղացի Պարգև Ակուլի

Ակուլյանը, որի հողատարածքը հարակից է իր հողատարածքին, միայն իրենց հողամասերի միջև նախատեսված է եղել 30սմ լայնությամբ համայանքապատկան հող: Պարգև Ակուլյանը նրա հողամասում ունի կառուցած առևտրի սրահ, որը չի գործում: Մինչև 2009-2010 թվականներն իրենց հողամասերի արանքում որևէ պատ չի եղել, միայն վերը նշած 30 սմ լայնությամբ համայքապատկան հողամասի վրա եղել է անասունների ջուր խմելու համար նախատեսված կիսախողովակ, որը ներկայումս չկա: 2009-2010 թվականներին, երբ ինքը եղել է Ռուսաստանի Դաշնությունում, Պարգև Ակուլյանը մոտ 40 սմ բարձրությամբ քարերով շարել և բաժանել է իրենց հողամասերը: Գյուղ վերադառնալուց հետո, տեսել է, որ դեպի Արևշատ գյուղ տանող ճանապարհի կողմից նա մոտ 40սմ բարձրությամբ քարով պարիսպ է շարել և տարել միացրել նրա ավտոտնակի արևելյան պատին, իսկ 2016 թվականին կրկին այդ ավտոտնակի հյուսիս-արևելյան պատերի անկյունից փշալարերով Պարգև Ակուլյանը շարունակել է հողատարածքի պարիսպը, որը անօրինական է և պարիսպը սխալ է կառուցել, քանի որ ավտոտնակի արեելյան պատից դեռ մոտ 3,7-3.8մ տարածք ունի, սակայն Պարգև Ակուլյանը զավթել է իր տարածքը: Ինքը այդ մասին հայտնել է Պարգև Ակուլյանին, սակայն նա ասել է, որ այդ տարածքը պատկանում է նրան, ցույց է տվել նաև ինչ որ գծագիր առանց որևէ ստորագրության և կնիքի, որտեղ ինքը տեսել է, որ նրա հողատարածքը հարակից է իր ավտոտնակին: Նրան ասել է որ դա սխալ գծագիր է, նա էլ ասել, որ արբանյակից կատարված գծագիր է: 2014-2015 թվականներին դիմել է ոստիկանության Արթիկի բաժին, որտեղ նյութեր են նախապատրաստվել: Պարգև Ակուլյանն իր հողատարածքի վերաբերյալ նույնպես ունի սեփականության իրավունքի վկայական: Կոնկրետ չգիտի, թե Պարգև Ակուլյանն իրեն ցույց տված գծագիրն ինչպես և որտեղից է ձեռք բերել, սակայն վստահ է, որ այն կեղծված է, քանի որ այդ գծագրի համաձայն իրեն պատկանող հողամասի որոշակի հատված ընկնում է նրա հողամասի մեջ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ տարածքային ստորաբաժանումից պահանջվել և ստացվել է 08-107-0033-0013 ծածկագրերով հողատարածքի կադաստրային գործի պատճենը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Համլետ Հովհաննիսյանի անվամբ համատեղ սեփականության իրավունքով Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում պետականորեն գրանցված է 290 քառակուսի մետր հողատարածք և իրավունքը պետականորեն գրանցվել է հիշյալ ստորաբաժանման Արթիկի բաժնի աշխատակից, պաշտոնատար անձ հանդիսացող, Մարտին Քիթոյանի կողմից հողատարածքի չափագրությունը կատարելու հիման վրա:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի տարածքային ստորաբաժանումից պահանջվել և ստացվել է 33043441 էլեկտրոնային ծածկագրով հողատարածքի կադաստրային գործի պատճենը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Պարգև Ակուլյանի անվամբ համատեղ սեփականության իրավունքով Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում, նույն գյուղի 1-ին փողոցի 45-րդ հասցեում պետականորեն գրանցված է 397 քառակուսի մետր հողատարածք և իրավունքը պետականորեն գրանցվել է հիշյալ ստորաբաժանման Արթիկի բաժնի աշխատակից, պաշտոնատար անձ հանդիսացող, Մարտին Քիթոյանի կողմից հողատարածքի չափագրությունը կատարելու հիման վրա:

Համլետ Հովհաննիսյանի մասնակցությամբ կատարված նրա հողատարածքի զննությամբ պարզվել է, որ հողատրածքի փաստացի առկա չափերը չեն համապատասխանում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանման համապատասխան աշխատակցի կողմից 31.05.2004թ. տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականում առկա հատակագծի չափերին՝ մասնավորապես զննությամբ պարզվել է, որ հողատարածքի հյուսիսային և հարավային եզրերի երկարությունը 15.6-ական մետր երկարություն ունենալու փոխարեն համեմատաբար ավելի քիչ են, այսինքն Համլետ Հովհաննիսյանին նշված հողատարածքը հատկացնելիս և դրա նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելիս, նրա օրինական շահերին էական վնաս է պատճառվել:

Դեպքի առթիվ 2017 թվականի մայսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 28102817 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

Մարտին Շահենի Քիթոյանը որպես վկա հարցաքննության ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի հունվարի 26-ից անհատ ձեռներեց է և զբաղվում է անշարժ գույքի հաշվառում-չափագրումով: 1997 թվականի հոկտեմբերից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում աշխատել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արթիկ տարածքային ստորաբաժանումում՝ որպես անշարժ գույքի հաշվառող և գնահատող: Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի բնակիչ Համլետ Միշայի Հովհաննիսյանին ընդհանրապես չի ճանաչում, իսկ նույն գյուղի բնակիչ Պարգև Ակուլյանին ճանաչում է որպես Սպանդարյան գյուղի բնակիչ, նրա հետ որևէ տեսակի հարաբերություններ, շփում չունի: Վերը նշված պաշտոնում աշխատելու ժամանակ իր գործառնութային պարտականությունների մեջ է մտել անշարժ գույքերի վերաբերյալ գծագրումներ կատարելը: Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի բնակիչ Համլետ Հովհաննիսյանին տրված թիվ 1357265 սեփականության իրավունքի վկայականի և նույն գյուղի բնակիչ Պարգև Աշոտի Ակուլյանի անվամբ տրված թիվ 2768884 սեփականության իրավունքի վկայականի վերաբերյալ մանրամասներ չի հիշում, քանի որ բավականին ժամանակ է անցել, բացի այդ վկայականներում կազմված հատակագծերը կատարվել է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ համայնքի ղեկավարի որոշման, համայնքի ղեկավարի կողմից հաստատված սխեմատիկ հատակագծի հիմքերով, այսինքն հատակագծերը հիմնականում իր կողմից կազմվել է համայնքի ղեկավարի կողմից կազմված սխեմատիկ հատակագծով և իր ձեռքի տակ ունեցած կադաստրային քարտեզով, որը հաստատված է եղել ՀՀ կառավարության կողմից, այդ պատճառով ուղղակի ինքը չէր կարող, իրավունք չուներ, որ իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելով սեփականության իրավունքի վկայականներում կեղծ գծագրումներ կատարեր: Իր կողմից գծագրումները կատարվել է օրենքով նախատեսված կարգով, որևէ խախտում թույլ չի տրվել: Նշված երկու հողամասերի սահմանները և չափերը ենթակա են լրացուցիչ ուսումնասիրության, քանի որ հնարավոր է այդ տարածքներում կատարված շինությունների շինարարությունը կատարվել է թյուրիմացությամբ, այսինքն՝ շինությունները հնարավոր է կառուցված չեն հողամասի հատակագծերով նախատեսված տեղերում, բացի այդ քանի որ դիմումատու Համլետ Հովհաննիսյանը հայտնել է, որ Պարգև Ակուլյանը մտել է իր հողամասի մեջ, ինչի պատճառով

իր հողամասի չափերը փոքրացել են, այդ մասով հնարավոր է սեփականատերն է խախտել հողամասերի մակերեսը:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ տարածքային ստորաբաժանումից առգրավվել է Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի բնակիչ Համլետ Հովհաննիսյանին տրված թիվ 1357265 սեփականության իրավունքի վկայականի և նույն գյուղի բնակիչ Պարգև Աշոտի Ակուլյանի անվամբ տրված թիվ 2768884 սեփականության իրավունքի վկայականի կադաստրային գործերը:

2017 թվականի հունիսի 26-ին թիվ 28102817 քրեական գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

2017 թվականի հուլիսի 19-ին ստացվել է թիվ 17-1268 եզրակացությունը՝ համաձայն որի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը թողնվել է անկատար, քանի որ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը չափագրում չի կատարում և հաշվառված չէ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում:

2017 թվականի հուլիսի 26-ին թիվ 28102817 քրեական գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել:

2017 թվականի նոյեմբերի 23-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Փորձաքննությունը լիարժեք կատարելու համար, դատաշինարարատեխնիկական փորձաքննության բաժնի փորձագետը միջնորդել է, որ փորձաքննությանն առաջադրված հարցերին ամբողջական և լիարժեք պատասխանելու համար անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ՝ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի 1-ին փողոցի թիվ 39 և 1-ին փողոցի թիվ 45 հասցեների WGS 84 կոորդինատային համակարգով ձեռք բերված հողամասի և շինության փաստացի բեկման կետերի X և Y կոորդինատները փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով:

Հիշյալ փորձաքննության անցկացման և փորձագետի միջնորդությունը բավարարելու համար 2018 թվականի մայիսի 25-ին համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարներիների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արտաշես Կիրակոսյանի անվամբ՝ հիշյալ փորձաքննության անցկացման և փորձագետի միջնորդությունը բավարարելու և համապատասխան մասնագետների մասնակցելու փորձաքննության համար, որի վերաբերյալ 2018 թվականի հուլիսի 2-ին Արթիկի և Անիի քննչական բաժին է ստացվել Ա.Կիրակոսյանի ստորագրությամբ հաստատված թիվ 07/29.4/3324-18 գրությունը այն մասին, որ իրենց հասցեագրված 25.05.2018 թվականի թիվ 56/31-682-18 գրությունը 27.06.2018 թվականին թիվ 07/29.4/3317-18 գրությամբ վերահասցեագրվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, որի վերաբերյալ նշված մարմնից մինչ օրս որևէ պատասխան դեռևս չի ստացվել և հնարավոր չի եղել բավարարել փորձագետի միջնորդությունը, ինչի հետևանքով դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման պահանջները թողնվել են անհետևանք:

2018 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացվել քրեական գործով վարույթը վերսկսելու մասին:

2019 թվականի հունվարի 15-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարներիների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արտաշես Կիրակոսյանի անվամբ ստացված գրության համաձայն Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի 1-ին փողոցի թիվ 39 և 1-ին փողոցի թիվ 45 հասցեների WGS 84 կորդինատային համակարգով ձեռք բերված հողամասի և շինության փաստացի բեկման կետերի X և Y կորդինատների տրամադրումը դուրս է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գործառույթների շրջանակներից:

2019 թվականի մարտի 26-ին հեռախոսազանգի միջոցով համապատասխան պայմանավորվածություն է ձեռք բերվել << ԳԵՈ-ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊ ընկերության տնօրեն Ս.Արևշատյանի հետ, որ 2019 թվականի ապրիլի 6-ին կամ 7-ին Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի 1-ին փողոցի թիվ 39 և 1-ին փողոցի թիվ 45 հասցեներում համապատասխան չափագրումներ է կատարելու և որոշելու նշված տարածքների WGS 84 կորդինատային համակարգով տվյալ հողամասի և շինության փաստացի բեկման կետերի X և Y կորդինատները և արդյունքները տրամադրելու է փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է << ԳԵՈ-ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊ ընկերության տնօրեն Ս.Արևշատյանի ստանալ չափագրումներիր պատասխանը, նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, ստանալ փորձաքննության եզրակացությունը, կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ, լուծել քրեական գործի վերջնական ընթացքը, որի համար կպահանջվի լրացուցիչ ևս երկու ամիս ժամանակ, իսկ քրեական գործի նախաքննության ժամկետը լրանում է 2019 թվականի ապրիլի 3-ին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 197-րդ հոդվածի 5-րդ կետով՝

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ու Մ Ե Մ

Վարույթիս թիվ 28102817 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնել երկու ամիս ժամանակով՝ մինչև 2019 թվականի հունիսի 3-ը ներառյալ:

Պետի տեղակալ՝ Ռ.Գ.ՄԽԻԹԱՐՅԱՆ